600.0004.20.01.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2016 թվականի №4Ա
քաղ. Երևան

«ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №169Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Բավարարել «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Երևան քաղաքում, Արարատի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրել 18415-18625ՄՀց, 19370-19645ՄՀց, 37072-37436ՄՀց, 38332-38696ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 19-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը Երևան քաղաքում, Արարատի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրվող 18415-18625ՄՀց, 19370-19645ՄՀց, 37072-37436ՄՀց, 38332-38696ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում 900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 հունվարի 2016 թ.
ժամը 16^{00}